

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՁԻ Բ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ

Հ Ա Ջ Ա Ր Հ Ի Ն Գ Հ Ա Ր Ի Ի Ր Ա Մ Ե Ա Կ Ը

(Շար. տես «Բազմավէպ» 1934, էջ 401)

Ս. ՄԱՇԹՈՅ — ՄԵՍՐՈՊ

Հայաստանի լուսաւորութիւնն և նոյն ինքն Ոսկեղէն դարն իրեն հիմնադիր կը ճանչնայ Տարօնի Հացեկաց աննշան գիւղի նշանաւոր զաւակը՝ Մաշթոց — Մեսրոպ Ազնուական¹ ու խոնարհ ծագում մը՝ որ կը բարձրանայ յանհունս և կ'անմահանայ՝ որպէս ոգին և սիրտը Հայ ցեղին:

Արքունիքի կեանքը՝ ուր համբաւեալ էր Մեսրոպ իրրեւ զինուորական և անգուգական քարտուղար² իր տեսիլներուն համար շատ անձուկ ասպարէզ մ'էր. նա խորապէս զգաց երկնային բարձր կոչում մը՝ որուն հետ անձուկ կապ պիտի ունենար հայ ցեղի ճակատագիրը:

Նախախնամութենէն օծտուած հանձարեղ մտքով և բարձր կարողութիւններով, կրթութեամբ Մեծն Ներսէսի ձեռքին տակ. ու գիտական մեծ պաշարին հետ՝ համացաւ յոյն և ասորի լեզուներուն մէջ, ինչպէս նաեւ պարսկերէնի:

Սուրին տեղ Աւետարանը փոխանակած՝ մենութեան մէջ երկար խօսեցաւ և ընտանեցաւ երկնքի հետ, ու ապա դարձաւ Հայաստանի նոր Առաքեալն ու Լուսաւորիչը: Մեսրոպի հոգեկան ու մտաւոր մեծութեան մասին հարազատ գաղափար կազմելու համար պէտք է ուշ դնել սա աննման տոգերուն. «Գերազանցեալ քան զամենայն՝ որք զայնու ժամանակաւ էին առաքինիք. քանզի ամբարտաւանութիւն և մարդահա-

ճութիւն ի նորա վարս տեղի գտանել երբեք ոչ կարացին... զի գոյր տեսեամբ հրեշտակական, մտօք ծննդական, բանիւք պայծառ, գործովք ժուժկալ, մարմնով արտափայլեալ, սարասիւք անճառ, խորհրդակցութեամբ մեծ, հաւատով ուղիղ, յուսով համբերող, սիրով անկեղծաւոր ուսուցանելով անձանձրոյթ³». մեծ մարդուն համար՝ մեծ խորենացի մը միայն կրնար հիւսել այսքան հոյակապ նկարագիր:

Մեսրոպ թափառեցաւ գաւառէ գաւառ, բարի մշակի մը պէս աննախանձ սերմանեց երկնքի պատգամները հայ կարօտեալներու հոգւոյն մէջ⁴. սակայն հողմերն ու ժամանակը կը տանէին ու կը ցնդեցնէին իր բարբառը. իր շունչը հետզհետէ կը սպառէր և նոր սերունդները, ամէն օր վերածնող Հայաստանը՝ դարձեալ կարօտ, դարձեալ ծարաւի կը մնային կեանքի և լոյսի:

Ասկից՝ Մեսրոպի տագնապն ու արցունքները, ինչպէս կը նկարագրեն մեր պատմիչները⁵. ասկից՝ իր հոգեկան մեծ երկունքը, որ վերջապէս ծնունդ տուաւ Հայ Գրերուն:

Մեսրոպ գերբնական ճիգերով ստեղծագործած իր տառերը՝ առաջին անգամ նուիրագործեց գերբնական դատի մը համար. անոնցմով յօդեց առաջին հայերէն գրութիւնը՝ հայերէն շարագրութիւնը ոսկեղէն թարգմանութեան: Եւրոպացի գիտնականն անգամ կը շեշտէ այդ յատուկ և

չնաշխարհիկ պարագան. «Առաջին գիրքն որ նորագիւտ նշանագրաց զգեստին ներքեւ ցնծալից ժողովրդեան ներկայանալ կրցաւ, էր Մատենից մատեանը՝ Ս. Գիրքը⁶»:

Եւ այդ չնաշխարհիկ երախայրիքը հայ գրական լեզուին՝ նուիրեց նա հայ մանուկներուն, այսինքն Հայ ցեղի ապագային և յաւերժութեան: Այդ պատմական⁷ կէտն է որ ուշադրութիւնը կը գրաւէ խորենացի պատմահօր, որ նրբօրէն կը դիտէ և զայն կ'աւանդէ խորհրդաբար:

Վասն զի երբ այլեւս պատրաստ էին հայ գրերը որպէս գործիք, ժամն էր հիմնարկելու Հայ աշխարհի լուսաւորութիւնը և լեցնելու անոր հոգեւոր կարօտութիւնը:

Վիպական ամէնէն հմայիչ գրութիւնն անգամ չի կրնար պատկերացնել հոգեթունը և սրտագրաւ պահը հայ աշխարհի զարթօնքին ու հետեւորդ ուրախութեան, խայտանքին և փարումին հայ նորաստեղծ գրերուն:

Եւ սակայն աշխարհիս մեծագոյն և միանգամայն անդորրագին յեղափոխութիւնն էր որ կը պայթէր Հայաստանի մէջ: Հայ ոստանը համակ կրթարան և ուսումնարան էր Մեսրոպի կոչին վրայ: Հոն խոնուած հազար ու բիւր հայ մանկութիւնը առաջին անգամ հեզեց հայ այբուբենը՝ Մեսրոպէն սորված, և ամբողջ Հայաստան թրթռաց և այբուբեն արձագանգեց: Հեզարանին յաջորդեց գիրկապը, և ընթերցում մը: Առաջին անգամ Մեսրոպ կարդաց իր ոսկի լեզուով շարադրած թարգմանութիւնը ու իր ետեւէն կրկնեց ամբողջ հայ մանկաշխարհը «Ճակատեղ զիմաստոյրիս և զիւրաւ, իմանալ զբանս հանձարոյ⁸»:

Այսպէս, հարկ է ըսել որ, թէեւ Ս. Սահակ մեծ դեր և կարեւոր աշխատանք ունեցաւ Ս. Գրքի նախկին թարգմանութեան

և ապա նոր սրբագրութեան մէջ Եզնիկի և ուրիշներու հետ, սակայն գործին հիմնադիրն և առաջին գեղեցիկ փորձը կատարողն եղաւ հանձարեղ Մեսրոպ:

Դժբախտաբար, մանաւանդ վերջին շրջանին մէջ, կարծես արդի գրողներուն քով նուազեցաւ վարկը Մեսրոպի ստեղծագործութեան՝ իր բոլոր արժէքներով, հետեւաբար աղօտացաւ նաեւ մտքերու մէջ անունն և փառքը՝ որուն արժանի էր մեր ցեղի ամէնէն հանձարեղ զաւակը: Օրինակի համար, երկրայական ձեւով մը Մեսրոպի վերագրել «Առակաց» գրքի թարգմանութիւնը և ան ալ ասորերէնէ⁹ կը ցուցնէ թէ որքան հարեւանցի է ծանօթութիւնը այն հարազատ աղբիւրներուն՝ ուր Մեսրոպի գործին մեծութիւնը այնքան կը փառաբանուի: Չարմանալի կը մնայ մեզի թէ ինչպէս Դուրեան⁶ և ապա արդիներէն շատեր կ'ենթադրեն Մեսրոպը լաւ ասորագէտ, բայց ոչ լաւ յունագէտ, կամ վերջապէս կասկածի տակ կը թողուն վերջինը:

Եւ սակայն կորիւն՝ ժամանակակից, ակնատես ու հարազատ աշակերտ՝ յայտնապէս կ'ըսէ թէ յետ հայ գրերն հնարելու և զանոնք կերպածեւելու Հոռոփանոսի հետ «ի թարգմանութիւն դառնային... եղեալ սկիզբն նախ յԱռակաց Սողոմոնի, որ ի սկզբանն իսկ ծանօթս իմաստութեանն ընծայեցուցանէ լինել, ասելով՝ եթէ՝ «Ճանաչել զիմաստութիւն և զիւրաւ, իմանալ զբանս հանձարոյ⁷»:

Նոյնը կը վկայէ նաեւ խորենացի⁸: Իսկ թէ այդ թարգմանութիւնը հաւանօրէն յունարէնէ կատարեց Ս. Մեսրոպ և ոչ ասորերէնէ՝ նախ անկից յայտնի է որ Գրերու կերպածեւումը կատարեց Հոռոփանոսի հետ՝ որ էր «Գրիչ ոմն հելլենական Գարութեան⁹». նոյն հելլենագէտ

1. Տես Հ. Գ. Նահապետեանի «Ս. Մեսրոպ և Հայաստանի ոսկեդարն» ուշագրաւ ուսումնասիրութիւնը. տպ. վեհապետի Ս. Ղ. 1914, էջ 8 եւն.
2. Կորիւն. Պամ. Վարուց և մահուան Ս. Մեսրոպայ

եւն. տպ. վեհապետի Ս. Ղ. 1894, էջ 14:
3. Խորենացի. Պամ. Գ. 45:
4. Կորիւն. անդ. էջ 14-15:
5. Անդ. 16-17. Փարսկեցի. Պամ. Ա. 4:

1. Ֆերրեր. Հայկ. աշխատասիրութիւնը. Թրգ. 2. 3. Տաշեան. էջ 66:
2. Խորենացի. Պամ. Գ. 45:
3. Կորիւն. անդ. 21-23., Ղ. Փարսկեցի. Ա. 4:
4. Կորիւն. անդ. 19:
5. Տես «Յառաջ» (Թ. 2768) անանուն յօդուածաբան «Ոսկեղարու հրաշագործները», ուր կ'ըսուի. «Իրեն

(Մեսրոպի) կը վերագրուի Առաջինը առաջին թարգմանութիւնը ասորերէնէ (վերջը սրբագրուած ըստ յունարէնի):
6. Պամ. հայ մտնոր. տպ. 1933, էջ 29.
7. Կորիւն. անդ. 19.
8. Պամ. Հայոց. Գ. 45:
9. Կորիւն. անդ. 19-20:

Հոուփանոսի ձեռքով է որ կը գրուի հայ թարգմանական շարագրութիւնը. «Որ և գրեցաւ ձեռամբն այնորիկ գրչի¹». և նոյն գրիչը կը մարզէ նաեւ Մեսրոպի աշակերտութիւնը նորաստեղծ հայ զրչութեան մէջ. «հանդերձ ուսուցանելով մանկունս գրիչս նմին դպրութեան²»: Արդ, միջափայըն ու պարագան յունարէնի վրայ կը խօսին. և շատ հաւանական է որ հելլենազէտ Հոուփանոսն ալ օժանդակեց թարգմանութեան մէջ: Նորայր ալ, թէեւ կասկածով, բայց յունարէնէ կը դնէ. «կորիւն կը գրէ... թէ իսկ և իսկ յետ զիւտի հայերէն նշանագրաց՝ Մաշտոց թարգմանեց (ի յունէ?) զԱռակս Սողոմոնի³»: Եւ յետոյ թէ. «Խորենացի կը գրէ... թէ Մեսրոպ (Մաշտոց) յետ զիւտի գրոյն «իսկոյն ի թարգմանութիւն ձեռնարկեալ (ի յունէ?)⁴. Չարհանալեան ալ թէ. «(Առաջին թարգմանութիւն Ս. Գրոց) ըստ մեծի մասին յասորւոյն՝ ի ձեռն Ս. Սահակայ, և մասամբ ալ ի յռեկ՝ ի սրբոյն Մեսրոպայ⁵»:

Իսկ թէ Մեսրոպ իսկապէս հմուտ էր յունարէն լեզուին՝ կը վկայէ Կորիւն. «Ի մանկութեան տիսն վարժեալ հեղեկական դպրոսրեալն⁶». որուն ձայնակից է նաեւ Ղ. Փարպեցի «Ի տիս մանկութեան իւրոյ ուսեալ դպրութիւն զյոյն⁷»:

Ս. Մեսրոպի մեծ գարգայման՝ որ առանց յունագիտութեան անհնարին էր՝ չքնաղ ապացոյցներ են նաեւ Ս. Սահակի թուղթերը: Սա առ Անատոլիս կը գրէ. «Առաքեցի զուսուցանողը մեր զՄեսրոպ⁸». և առ Ատտիկոս՝ աւելի հնչուն. «Առաքեցի զուսուցող մերոյ աշխարհիս Մեսրոպ⁹»: Եւ պէտք է աւելցնենք թէ Մեսրոպ հայ աշխարհէն զատ՝ լուսաւորիչ է նաեւ վրաց և Աղուանից աշխարհներուն ալ՝

1, 2. Կորիւն. անդ. 19-20.
3. Կորիւն վրդ. և նորին թրգմ. 381.
4. Անդ. 382.
5. Հայկ. թրգ. Նախնեաց. 94.
6. Պատմ. վարուց Ս. Մեսրոպայ. 13.
7. Պատմ. Հայոց. Ա. Ժ.
8. 9. Խորենացի. Պատմ. Հայոց. Գ. ծէ. (532).
10. Հմմտ. Խորենացի: Կորիւն՝ ալ «Ի ձեռն երկուց հաւասարեցոյն» կ'ըսէ. (22), և այլուր «գոգգակսն» Ս. Սահակի (անդ. 42):
11. Պատմ. Հայոց. Ա. ծգ. (483):
12. Յեքրէր. Հայկական աշխատ. Են. էջ 64:

որոնց նոյնպէս տուաւ զրի և մշակութեան լոյսը:

Եւ յետոյ, Մեսրոպ առանց քաջ յունագիտութեան ոչ կը համարձակէր Հայաստանի յունական բաժինն հայացնել՝ ուր անպայման հարկաւոր էր հմտութիւն յունարէնի, և ոչ կրնար արժանանալ Բիւզանդիոնի Հայրապետին և Կայսեր յարգանքին ու գնահատութեան՝ անոնց կողմէն դասուելով յոյն առաջին վարդապետներու կարգին¹⁰:

Այսքան յայտնի և պատմական ճշմարտութեան մը արժէքը լաւ ըմբռնած են ազգային պատմութեան խորը թափանցող մտքերը, ինչպէս Հ. Մ. Չամչեան՝ որ հետեւեալ տողերն ունի. «(Մեսրոպ) եղեւ զիւնադպիր թագաւորացն Հայոց. զի էր ճարտար բազում լեզուաց, այսինքն յունաց, ասորոց և պարսից¹¹». հարկ չկայ երկարել շարքը. բայց, չեմ գիտեր յամօթ թէ ի շինութիւն մեր թերուաներուն՝ եւ ըրոպցիներէն գէթ մէկը յիշենք թէ ինչպէս ըմբռնած է Մեսրոպը՝ մեր պատմագիրներուն քննութեամբ. «Ս. Մեսրոպ Առաքեալ Հայոց... բացի իւր մայրենի լեզուէն՝ հմուտ յունական, ասորի և անշուշտ պարսիկ լեզուաց, բայց մանաւանդ ի մանկութենէ կը թուած յունական մատենագրութեամբ¹²»:

Թէ Ս. Մեսրոպ Սողոմոնի Առակներէն զատ ուրիշ գրքեր ալ թարգմանած պէտք է ըլլայ Աստուածաշունչէն՝ չէ կարելի կասկածիլ: Թէ որոնք են իր այդ թարգմանութիւններն ի մասնաւորի՝ հոտ է որ չեն համաձայնիր բանասէրները, քանի որ Կորիւնի և Խորենացոյն վկայութիւններն ալ միին են կամ մեկնութեան կարօտ: Չենք խօսիր Ղ. Փարպեցոյն վրայ՝ որ այս մասին ոչ մէկ լոյս կրնայ տալ մեզի:

8. 9. Խորենացի. Պատմ. Հայոց. Գ. ծէ. (532).
10. Հմմտ. Խորենացի: Կորիւն՝ ալ «Ի ձեռն երկուց հաւասարեցոյն» կ'ըսէ. (22), և այլուր «գոգգակսն» Ս. Սահակի (անդ. 42):
11. Պատմ. Հայոց. Ա. ծգ. (483):
12. Յեքրէր. Հայկական աշխատ. Են. էջ 64:

Մերձաւորագոյն և հարազատագոյն աղբիւրին՝ Կորիւնի համեմատ Ս. Մեսրոպ շատ գրքեր թարգմանած է: Արդարեւ ինչ որ Կորիւն Բ. թարգմանութեան առթիւ միայն Ս. Սահակի կ'ընծայէ. «Իսկ երանելոյն Սահակայ զեկեղեցական գրոց գոմարտարիւն կանխաւ յունական բարբառոյն ի հայերէն դարձուցեալ¹» իրրեւ «յառաջագոյն յանկարծագիւտ փութանակի թարգմանութիւն²», նոյն այդ եկեղեցական գրոց գոմարտարիւն է անշուշտ՝ զոր կանխապէս յիշելով՝ խորհրդաւոր ձեւով մը՝ զայն կ'ընծայէ հաւասարապէս Սահակի և Մեսրոպի միանգամայն. «Յայնմ ժամանակի երանելի և ցանկալի աշխարհս Հայոց, անպայման սքանչելի լինէր, յորում անկարծ ուրեմն օրէնսուսոյց Մովսէս՝ մարգարէական դասուն, և յառաջադէմն Պաւղոս՝ բովանդակ առաքելական գնդովն, հանդերձ աշխարհակեցոյց աւետարանաւն Քրիստոսի, միանգամայն եկեալ հասեալ ի ձեռն երկուց հաւասարեցոյն՝ հայաբարբառը հայերէնախօսը լինէին³». այսինքն՝ պարզ ոճով՝ Ս. Սահակ և Ս. Մեսրոպ հայերէն թարգմանեցին Մովսէսի Հնգամատեանը, բոլոր մարգարէները (և Սաղմոս), Ս. Պողոսի և միւս բոլոր առաքելական թուղթերը (և Գործք Առաքելոց) և Չորս Աւետարանները: Կ'ենթադրուի անշուշտ այդ գործին մէջ օժանդակութիւնն և աջակցութիւնը երէց թարգմանիչներու, ինչպէս կանխաւ ակնարկած է նոյն ինքն Կորիւն՝ Յովհաննի և Յովսէփի անուններով⁴:

Կը համարիմ թէ Կորիւնի յիշեալ զոյգ

1. Կորիւն. անդ. 33-34.
2. Անդ. 34.
3. Անդ. 22.
4. Անդ. 19.
5. Պատմ. Հայոց. Գ. ծգ. Ուր ուշ դնելու է որ Կորիւն ու Խորենացին ամփոփող Սուտ-Կորիւն սա ձեւով կը դնէ խօսքը. «... զքսան և երկու յայտնիսն, գեթ կտակարանսն» լեւելով կամ զանց ընելով «զՆոր Կտակս», որ կայ Խորենացոյն քով, ինչպէս և Կորիւնի «հանդերձ աշխարհակեցոյց աւետարանաւն Քրիստոսի» (22).
6. Վիստանեանը և Նորայր կը կարդան «Նա (Մեսրոպ) և աշակերտը նորա» Են. Ինչպէս կը նշանակէ Նորայր ինքը թէ «Հ. Մեք. Չամչեան կից կը գրէ Եսեռ աշակերտը նորա» (Կորիւն վրդ. Են. էջ 382. ծան. 2).
7. 5 Հնգամատեանը, 6 Յետու, 7 Գատաւորը և Հոսթ, 8 Ա. և Բ. Թագաւորը, 9 Գ. և Գ. Թագաւորը, 10 Ա. և Բ. Մնացորդը, 11 Ա. և Բ. Եզր, 12 Եսթեր, 13 Սաղմոսը, 14 Յովք, 15 Առակը, 16 Ժողովող, 17 Երգ Երգոց, 18 Եսայի, 19 Երեմիա, Ողբերովն և Բարբոթի թղթով միասին, 20 Եզեկէլ, 21 ԺԲ. Մարգարէները, 22 Գանիէլ: Հմմտ. Նորայրի «Կորիւն վրդ. Են» 382.
8. Խորենացի. Պատմ. Գ. իւէ. -9. Ղ. Փարպ. Պատմ. Ա. Ժ.

վկայութեանց ձուլումն և նոյնացումը - այսինքն բանասէրներն յոգնեցնող «գրոց գոմարտարիւն» և երկուց հաւասարեցոյն (Սահակի և Մեսրոպի) հայաբարբառ, հաշիւեալ զարձուցած Հին ու Նոր Կտակարանի գրքերը - իր կատարեալ մեկնութիւնն և վաւերացումը գտած կ'ըլլայ Խորենացոյն յայտնի բացատրութեամբ. «Խորհրդաբար սկսանելով յԱռակաց, բովանդակ գրասն և երկու յայտնիս և զՆոր Կտակս՝ յերոշ ի հայ բուն, նաեւ՝ աշակերտը նորա Յոհանն եկեղեցային և Յովսէփի Պաղնացի»:

Հետեւաբար ըստ Կորիւնի վկայութեան՝ մեկնուած Խորենացոյն ձեռքով՝ Ս. Մեսրոպ Ս. Սահակի հետ թարգմանած կ'ըլլայ Գրասն և երկու յայտնի գրքերն Հին Կտակարանին՝ ըստ երբայական կանոնին⁵, և Նոր Կտարարանը:

Այս ոճով զիւրաւ կ'ըմբռնուի Մեսրոպի անունը. արդարեւ մեզի անհաւատալի և անիմաստ կը թուի այն կարծիքը՝ որուն համեմատ Մեսրոպի կ'ընծայուի մի միայն Առակաց գիրքը: Ինչո՞ւ և ինչպէս, Ս. Մեսրոպ, մեծ յունագէտ յետ Ս. Սահակի և առաջին ու ամենամեծ թարգման⁶, որ կը մարզէ երէց աշակերտները սոյն մեծ գործին պատրաստութեան⁷, որ կը մտահոգուի իր ազգին հոգեւոր և մտաւոր լուսաւորութեան համար, որ անկարագրելի ճիգերով վերջապէս կը հնարէ հայ գիրը և յաջողութեամբ կը կատարէ առաջին փորձը, ինչո՞ւ պիտի բաւականանար այդ առաջին քայլով: Մանաւանդ որ ինքն էր տեղեակ, գիտակ, և ամէնէն մեծ միտքն և սիրտը

1. Կորիւն. անդ. 33-34.
2. Անդ. 34.
3. Անդ. 22.
4. Անդ. 19.
5. Պատմ. Հայոց. Գ. ծգ. Ուր ուշ դնելու է որ Կորիւն ու Խորենացին ամփոփող Սուտ-Կորիւն սա ձեւով կը դնէ խօսքը. «... զքսան և երկու յայտնիսն, գեթ կտակարանսն» լեւելով կամ զանց ընելով «զՆոր Կտակս», որ կայ Խորենացոյն քով, ինչպէս և Կորիւնի «հանդերձ աշխարհակեցոյց աւետարանաւն Քրիստոսի» (22).
6. Վիստանեանը և Նորայր կը կարդան «Նա (Մեսրոպ) և աշակերտը նորա» Են. Ինչպէս կը նշանակէ Նորայր ինքը թէ «Հ. Մեք. Չամչեան կից կը գրէ Եսեռ աշակերտը նորա» (Կորիւն վրդ. Են. էջ 382. ծան. 2).
7. 5 Հնգամատեանը, 6 Յետու, 7 Գատաւորը և Հոսթ, 8 Ա. և Բ. Թագաւորը, 9 Գ. և Գ. Թագաւորը, 10 Ա. և Բ. Մնացորդը, 11 Ա. և Բ. Եզր, 12 Եսթեր, 13 Սաղմոսը, 14 Յովք, 15 Առակը, 16 Ժողովող, 17 Երգ Երգոց, 18 Եսայի, 19 Երեմիա, Ողբերովն և Բարբոթի թղթով միասին, 20 Եզեկէլ, 21 ԺԲ. Մարգարէները, 22 Գանիէլ: Հմմտ. Նորայրի «Կորիւն վրդ. Են» 382.
8. Խորենացի. Պատմ. Գ. իւէ. -9. Ղ. Փարպ. Պատմ. Ա. Ժ.

յառաջացնելու լուսաւորութեան գործը, որուն այնքան նպաստաւոր էին պայմաններն ալ՝ շնորհիւ մեծիմաստ հայրապետին և թագաւորին և ժողովրդեան խանդավառ ընդունելութեան և երամ երամ աշակերտներու սիրանուէր գործակցութեան:

Որքան ալ մթին ու տարտամ ըլլան մեր պատմիչներու վկայութիւնները, սակայն հիմնական կէտերու շուրջ ակնարկները պիտի բաւեն որ կարենանք գանձը ըմբռնել կամ գէթ մեկնել:

Այսպէս, Կորիւն, անով իսկ որ կ'ըսէ թէ երբ գիրը գտան «ի թարգմանութիւն զառնային (Մեսրոպ և իր աշակերտները՝ յանուանէ Յովհան Եկեղեցացի և Յովսէփ Պաղնացի, որոնց վրայ Ղ. Փարպեցի կ'աւելցնէ նաեւ Տէր Խորձենացին և Մուշէ Տարօնեցին)»... եղեալ սկիզբն նախ յԱռակացն Սողոմոնի¹» կը հասկցուի թէ Մեսրոպ շարունակեց գործը իր աշակերտներուն հետ. ապա թէ ոչ զուր տեղ պիտի զնէր այդ բացատրութիւնը: Եւ ստուգել, Խորենացոյն «իսրոյն ի թարգմանութիւն ձեռն արկեալ» և Կորիւնի «Չյառաջագոյն զյանկարծագրու գիտարանակի զթարգմանութիւնս» բացատրութիւնները կասկած չեն թողուր թէ Մեսրոպ Առակացէն վերջ անմիջապէս ձեռնարկեց նախակառու զբարձրեքը թարգմանել՝ Ս. Սահակի և յիշեալ քանի մը ձառու և յեզրագետ աշակերտներու հետ:

Մանաւանդ որ հակառակ է պատմութեան՝ ենթադրել թէ Մեսրոպ բոլոր գործը թողած ըլլայ միայն Ս. Սահակի՝ ինչպէս պնդել կ'ուզէ Ղ. Փարպեցի: Վասն զի նախ անոր հայրապետական ծանր պաշտօնին հետ քիչ կը հաշտուէր անմիջական և բոլորական նուիրում մը այդ մեծ գործին: Աշակերտներու գործակցութիւնն ալ այս նախնական շրջանին՝ չափաւոր էր. և արդէն հազիւ չորս անուն կը տրուի. և անոնք այն խումբը որ մեծ ու պատկառելի գործ մը պիտի կատարէր՝ դեռ հմտանալու պէտք ունէր: Եզնիկ, Յովսէփ, Ղեւոնդ և Կորիւն դեռ 432-434 շրջանին Բիւզանդիոն կը գտնուին յունարէնի մէջ

հմտանալու. «իսկ թարգմանչացն (յետ Եղեսիայի) անցեալ գնային ի կողմանս Յունաց. ուր և ուսնայր և տեղեկացեալք, թարգմանիչս կարգէին ըստ հելլենական լեզուին²»:

Մինչ լաւ գիտենք, ինչպէս կանխաւ շեշտեցինք, թէ Ս. Գրքի Ա. թարգմանութիւնը՝ առնուազն Հին և Նոր Կտակարանի նախականոններուն՝ պէտք է աւարտած ըլլար 408-415 շրջանին. ապա թէ ոչ իմաստ մը չ'ունենար «փոքրակի»³:

Բայ ի Մեսրոպի խանդավառութենէն՝ օր առաջ իր մեծ ծրագիրն իրագործելու Ս. Գրքը տալով ազգին ձեռքը և հիմնելու հայ ծէսը, ուրիշ պարագաներ եւս կը փութացնէին նոյն այդ գործը. և նախ թախանձագին աղերսը Վրաց, որոնք ըլլացած Մեսրոպի համբաւէն և նախանձելով հայ աշխարհին ունեցած մեծ բախտին գրոց գիւտով, պատգամաւորութիւն զրկած էին որ Մեսրոպ երթար և իրենց ալ գիր ու գրականութիւն տար. ինչպէս որ ըրաւ ալ, ոչ միայն իրենց այլ նաեւ Աղուանից աշխարհին:

Հարկ չկայ մեծ ապացոյցներ փնտելու թէ Մեսրոպ այն ատեն միայն կրնար հեռանալ Հայաստանէն՝ երբ հոն գործը իր հասունութեան մէջ էր արդէն: Զէ որ խրատուած էր գրոց գիւտի նախափորձին ձախողութեամբ: Յետոյ, ինչպէս ըսինք, Ս. Սահակ բազմազբաղ էր, Մեսրոպի տեղ ոչ ոք կրնար փոխանակել, Մեսրոպի՝ որ այդ առաջին շրջանին ամբողջ գործին ոգին, կազմակերպիչը, տեղեակն և առաջնորդն էր:

Եւ արդէն Վրաց կողմերն երկար չկենալու պարագան ալ — ուր իր երէց աշակերտներէն իրեն փոխանորդ գործիչներ թողուց — կը ցուցնէ թէ որքան փարած էր լուսաւորութեան գործին. գիտենք թէ դեռ որքան կազմակերպութիւն հարկաւոր էր աշակերտներու կրթութեան, և թարգմանական գործին յառաջխաղացումին հա-

1. Պատմ. Ս. Մեսր. ԵՆ. 19.
2. Կորիւն, անդ. 33.

մար, գործ մը որ կարծես սահման չունէր. յետ Ս. Գրքի՝ Յոյն և Ասորի աշխարհներու Ս. Հայրերու ծովածաւալ աշխատութեանց թարգմանութիւնը:

Երբ Վրաց և Աղուանից կողմէն դարձաւ Մեսրոպ, Ս. Սահակ դեռ զբաղած էր Ս. Գրքի թարգմանութեան՝ երկրորդականոններուն հաւանորէն:

Սակէ վերջ կու գայ իր մեծ առաքելութիւնն ի Բիւզանդիոն, և որուն յաջող ելքին վրայ՝ կը ձեռնարկէ Յունական բաժնի Հայոց լուսաւորութեան:

Աւանդութեան այն վարկածը՝ թէ հոն ալ Ս. Մեսրոպ յունարէնէ Ս. Գրքի մասեր թարգմանեց՝ հաւանական է, մանաւանդ որ ըսենք Եկեղեցական գրոց գումարտընեկ վերջը — այսինքն նախակառուներուն — դեռ շատ բան կը մնար. և այդ էր որ հետզհետէ կը լրացնէին «երկու հաւասարակը»:

Նորայր ալ տրամաբանօրէն նոյն հետեւութեան կը յանգի. «Որով և է օրինակաւ՝ քան զվկայութիւնս Փարպեցոյ և Խորենացոյ զօրաւոր է վկայութիւն ժամանակակից պատմիչին Կորեան. այսինքն՝ թէ Սահակ և Մաշտոց ի միասին բարգմանեցին փոքրակի զՀնգաւատեանն, զՄարգարէարեան և զՆոր Կտակարանս¹»:

Հետաքրքրական պիտի ըլլար կարենալ ասոնց մէջէն մի առ մի նշանակել ի մասնաւոր Ս. Մեսրոպի թարգմանութիւնները: Ծանօթ եզրը բազմաթիւ անշուշտ պիտի կազմէ Առակաց գիրքը, որ ինչքան ալ սրբազրուած ըլլայ յետոյ Ս. Սահակի և Եզնիկի ձեռքով՝ կը պահէ սակայն իր նախնական նկարագիրը. քանի որ, ինչպէս նկատեցինք զիտողութեան մը առթիւ՝ զոր Ֆնտզեան ըրած էր Խորենացոյն

«միւսանգամ թարգմանեցին» բացատրութեան՝ իսկապէս Սահակ-Եզնիկ «հաստատեցին» այսինքն սրբագրեցին և ոչ թէ նոր թարգմանութիւն մը կատարեցին:

Արդ, ինչ է յատուկ նկարագիրն և բնազդը մը Առակաց լեզուին: — Գծարխտաբար ոչ կարելի և ոչ ներելի է հոս զբաղել երկար Սահակեան — Եզնիկեան և Մեսրոպեան լեզուներու զանազանութեան հարցով, որու մասին Նորայր² ալ կը տատամս իրաւամբ. սակայն իր կրկին հարցականներն հաւանօրէն հաստատական պէտք է նկատել:

Եւ ստուգել Առակաց լեզուն կը ներկայանայ աւելի ընտանեկան, կակուղ և սահուն, յատուկ բառամթերքով և ժողովրդական ձեւերով. և այս լեզուին մերձաւորութիւն կը ցուցնեն, ըստ մեր համեստ նկատողութեան, առաւելապէս Սողոմոնի «Իմաստորիւն»³, Սիրար, Եզր. նմանութիւններ հաւանօրէն և կամ համեմատական ինչ ինչ մօտաւորութիւններ բառերու և ասութիւններու՝ Յոյի և Մակարայեցոյ մէջ. բայց լեզուի ընդհանուր կազմը յատկապէս Իմաստորեան, Սիրարի, Սաղմուներու, ԺԲ Մարգարէից և Նոր Կտակարանի գրքերուն հետ նմանութիւններ կը ցուցնէ աւելի կամ պակաս:

Յուցնելու համար ընթերցողներուն Առակաց գրքի լեզուին եզակի գիրքն ու կազմը, հոս կը ներկայացնենք ամփոփ նմոյշ մը անոր յատուկ բառերուն՝ պարզ կամ անսկզբաւոր, ինչպէս նաեւ բարդ բառերուն, և բայերուն և մէկ երկու ասացուածքներու, որոնք մասնաւորապէս իրենց ժողովրդական կերպարանքով և բնոյթով Մակարայի մտայնութեան կը պատշաճին:

1. Կորիւն վրդ. և նորին թրգ. 333.
2. «Արդեօք զանազանութիւն կայր ի հայկաբանութեան Սահակայ և Մաշտոցի և այս պատճառաւ այլեւայլ ոճոյ տէր եղան այն պատանիք՝ որ լոկ առ ոտս Ս. Սահակայ զիգրեցան, և այնք՝ որ միայն Ս. Մաշտոցի աշակերտեցան, և վերջապէս այնքով որ կէս ի Սահակայ և կէս ի Մաշտոցի ընկալան զԵրեմանց ուսումն: Արդեօք թարգմանիչքն, Հայաստանի զանազան զաւուսաց զաւակք, դասական հայերէն լեզուի վարժելով հանդերձ՝

մուտ տուած են յերեանց գիրս նաեւ իւրաքանչիւր զաւուսական տարրեր: Յուսալով որ թերեւ ժամանակն յաջողի զհացուցիչ պատասխան տալ այս հարցմանց՝ առ որ անբաւական են մեր այժմու կցկտուր տեղեկութիւնք»¹, անդ, 16-17.
3. Ասով չենք ուզեր նուագեցնել յատուկ փայլն և վեմութիւնը սոյն գրքին, որ տեղ տեղ մանաւանդ գեղարարական է:

Յատուկ բառեր (պարզ-ածակ)

- Նշանացի. Զ. 13 (հմմտ. Ղուկ. Ա. 25)
- Արմատարի. ԺԵ. 5 (հմմտ. ԽՆ. Գ. 4, Յուդա. 12)
- Ախորժելի. ԻԵ. 25
- Լուսուռ. ԺԸ. 18
- Լեզուանի. ԻԱ. 19 (հմմտ. Սարգս)
- Շոյտ (= աշխոյժ). ԻԲ. 29
- Վաղվաղուկ. ԺԲ. 19
- Մեծապէս. ԺԸ. 12 (հմմտ. ՄԼ. Եղր. Մակ. ԽՆ. Յոբ.)
- Թափ (դժոխոց). Թ. 18
- Պարծ (շրջի). Լ. 29
- Ողորդ. ԺԵ. 1, ԺԸ. 23
- Նախատ. ԺԹ. 6 (հմմտ. Սարգս)
- Անկապուտ. ԻԲ. 23
- Քնէած. ԻԳ. 21
- Բողանոց. ԺԸ. 24, ԻԳ. 21
- Ականողիք. ԻԳ. 29
- Արաղաղ. ԻԵ. 30
- Մարի (հաւ). ԻԵ. 31
- Իւ. ԼԱ. 19
- Բանջարեղէն¹. ԺԵ. 17
- Նահապետ². ԻԳ. 5
- Ազահագոյն. ԻԳ. 3
- Խորագիտագոյն. ԺԹ. 25, ԻԱ. 11
- Անմտագոյն. Թ. 16, Լ. 1 (հմմտ. ԽՆ. Յոբ.)

Յատուկ բարդ բառեր

- Բանգէտ. ԻԶ. 26
- Չորձաբեր. ԻԶ. 26
- Հարկադիր. Զ. 7
- Պաստառալիր. Է. 18
- Անձնդիր. ԺԳ. 23
- Քրքմացան. Է. 18
- Ֆանձնապատան. ԺԳ. 16
- Լերդակողմն. Է. 23

1. Նկատելու է որ անդին միւս զրքերուն մէջ 40 անգամ կայ՝ միշտ բառերս:
 2. Վերակառու իմաստով, Իսկապէս հետաքրքրական եզրականութիւն է. հմմտ. ըստ Եօթ. εἶς τὸν οὐρανὸν τοῦ προεστηκότος αὐτοῦ = Ի տուն անապետի իւրոյ =

- Շագաւաշուրթն. ԺԹ. 1
- Արագոտն. ԻԳ. 34
- Խօսակից. Զ. 22
- Հրապարակախօս. ԺԱ. 26
- Հրապարականէծ. Լ. 31
- Բնդմտատար. ԺԳ. 10
- Վնասասէր. ԺԷ. 19
- Չարակամ. ԺԷ. 11, ԺԹ. 6
- Քաղցրահայեաց. ԺԲ. 13
- Գործատեաց. ԺԹ. 1
- Ինքնահալած. Զ. 12
- Կաշառառու. ԺԵ. 27 (հմմտ. Յոբ. ԺԵ. 34)
- Հանդարտասիրտ. ԺԵ. 19
- Բարկասիրտ. ԺԳ. 17, ԼԱ. 4
- Նեղասիրտ. ԺԸ. 14 (հմմտ. նեղասաստ. Սիր. Գ. 35)
- Խօթասիրտ. ԺԲ. 8, ԻԲ. 29 (հմմտ. Սիր. Գ. 34)
- Հողագործութիւն. Զ. 7 (հմմտ. Երեմ. ԾԱ. 23)
- Իրաւագիտութիւն. ԺԶ. 23 (հմմտ. Իրաւագէտ. Յոբ. ԺԶ. 20)
- Իրաւախօհ. ԺԲ. 25, ԺԳ. 10, ԻԹ. 7, (հմմտ. Մատթ. Ե. 25)

Յատուկ բայեր

- Մոլախոտեմ (իմ). ԻԳ. 31
- Սրարբիմ. Է. 10 (հմմտ. Երգ. Զ. 4, ԽՆ. ԺԷ. 4)
- Ոստիր (ի բաց). (հմմտ. ԽՆ. Ե. 22)
- Խռկիմ³ (եմ). ԺԳ. 11
- Կողկողիմ. ԺԳ. 19 (հմմտ. Յոբ. Ե. 34)
- Յորսայսիմ. Զ. 8.
- Վարուն (ճանապարհ). ԺԵ. 19
- Բռնագրօսեմ. ԺԵ. 26
- Նողկացուցանեմ. ԻԳ. 8
- Նխամ (նիւթել). ԺԶ. 28 (հմմտ. Ոսկ. Մ. ա. 9)

de son premier maître. Մինչ Վուլկաթան ըստ Երբ. ունի in caelum (= յերկինս):
 3. Խռնուիլ, բարդուիլ, կուտակուիլ. հմմտ. Ոսկ. Բ. կոր. ԺԳ.

- Առող¹. ԻԲ. 9 (հմմտ. լացող. Սիր. Է. 38, Հ. ԺԲ. 15)
- Նիւթող. ԺԳ. 23
- Փսխած². ԻԶ. 11
- Հոգած³. ԺԳ. 30, ԺԷ. 22

Յատուկ ժողովրդական բացատրութիւններ

- Առ օրին⁴ յայտնէ... ԺԲ. 16
- Գործ⁵ է գտանել... Ի. 6
- Կարաս⁶ ծակ է տուն օտար... ԻԳ. 27
- Կարգ եղ լեզուի... ԼԱ. 25
- Յեց ոսկերաց՝ սիրտ հոգած⁷:

Եզական այս կէտերու նկատողութիւնն և ահնարկուած զրքերու փոխադարձ կամ մերձաւոր աղերսը անշուշտ հիմ մը ունի և իրականութեան կը մօտենայ, որքան ալ վճռական փաստեր չկարենանք ցուցնել, և հետեւաբար՝ Առակացն հիմ առնելով՝ կարելի է և պէտք է ըսել թէ հոն կայ Մեւրոպեան լեզուն իր ընտանի և ժողովրդական բնոյթի նմոյշներով, որոնք զեռ կը նշմարուին յետ այն հարթիչ և միակերպող աշխատութեան, որ կատարուեցաւ սրբագրութեան ժամանակ:

Այդ Մեւրոպեան լեզուն դիմաց՝ ուրիշ զրքերու մէջ ալ կ'երեւի հանդիսաւոր վսեմութեամբ՝ Սահակեան կամ Եզնկեան լեզուն՝ որ նախորդէն կը տարբերի իրրեւաւելի չափուած և զգուշաւոր, կանոնաւոր և կուռ, զուսպ և ազնուական, միանգամայն պերճ և կարկառուն իր դարձուածքի ճարտար կառուցուածքով, մէկ խօսքով

1. Ող-ի (բայածականներու) առատ գործածութեան համար անս յատկապէս ՄԼ. Եղր. Սարգս, և Նոր կտաւ կարեւի զանազան գրքերը:
 2. Հմմտ. Պետր. Բ. 22. ուր նոյն խօսքն է՝ նոյն ձևով յիշուած (նոյն թարգմանչէն):
 3. Հմմտ. Գործած. Ելք. ԻԳ. 10
 Ծեծած. Ես. Ա. 31
 Զածած. Ես. ԽԱ. 14
 Շինած. կոր. Եփես. Են:
 4. Հմմտ. Իրրեւ գտնուելու վարձը. Յոբ. Է. 1:
 5. Իմաստն է՝ մեծ բան է, դժուարին է, բաժնութիւն է գտնելը: Տես Հայկազեան բառ. Գործ: Հմմտ. Եթ.
 6. Սրբան յարմարօքն առածի վերածուած: Մերն ըստ Եթ. Καρδια αἰσθητικῆ (= զգայուն, հոգացող սիրտ = sensible). մինչ Վուլկ. ըստ Երբ. ունի invidia (= նախանձ):
 7. Անդ, 33-34:

զեղեցիկ — վսեմին օրինակը՝ զոր դասական անունով կը կնքենք:

Հուսկ կը մնայ նկատել թէ, Մեսրոպ, յետ առաջին շրջանին և նախկին թարգմանութեան՝ ինչ զեր կատարեց սրբագրութեան մէջ:

Դժբախտաբար հոս ալ պատմութիւնը ժլատ է. մանաւանդ թէ ամէնէն հեղինակաւոր ձայնը՝ Կորիւն, նոյն ինքն Ս. Մեսրոպի վարքին⁸ մէջ կարծես կը ժխտէ անոր՝ և է գործակցութիւնը այս երկրորդ և կարեւոր աշխատանքին մէջ. և ստուգիւ վերեւ յեղեղուած վկայութեան մէջ «Խակ երանելոյն Սահակայ... հանդերձ Եզնական՝ գյառաջագոյն զյանկարծագիւտ զփութանակի զթարգմանութիւնս, հաստատէր ճշմարիտ օրինակօք բերելովք» չկայ Մեսրոպի անունը:

Սակայն կը համարիմ որ Կորիւն ցայտուն անուններ մը տալու համար է շեշտած այդ երկուքը, և հոյակապ ու դժուարին աշխատութիւնը՝ ինչպէս հարկ կը տեսնեն իրաւամբ պնդել Չարբհանաւեան, Նորայր, Գուրեան և ուրիշներ՝ պէտք է համախօսմը և հաւաքական ուժերով կատարուած ըլլայ, և այդ կերպով միայն կրնար իրագործուիլ ան: Հետեւաբար, կը համարիմ որ Կորիւն նշանակած է Ս. Սահակն իրրեւ գործին զուլի, և Եզնկը որպէս ամէնէն կարկառուն դէմքը աշակերտներուն մէջ, թողով մեզի ենթադրել Սահակին գործակից՝ Մեսրոպը, և Եզնկի՝ ուրիշ շատ մը աշակերտներ:

Մանաւանդ որ Կորիւնի հետագայ խօս-

8. Եթ. 30. 31. 32. 33. 34. 35. 36. 37. 38. 39. 40. 41. 42. 43. 44. 45. 46. 47. 48. 49. 50. 51. 52. 53. 54. 55. 56. 57. 58. 59. 60. 61. 62. 63. 64. 65. 66. 67. 68. 69. 70. 71. 72. 73. 74. 75. 76. 77. 78. 79. 80. 81. 82. 83. 84. 85. 86. 87. 88. 89. 90. 91. 92. 93. 94. 95. 96. 97. 98. 99. 100. 101. 102. 103. 104. 105. 106. 107. 108. 109. 110. 111. 112. 113. 114. 115. 116. 117. 118. 119. 120. 121. 122. 123. 124. 125. 126. 127. 128. 129. 130. 131. 132. 133. 134. 135. 136. 137. 138. 139. 140. 141. 142. 143. 144. 145. 146. 147. 148. 149. 150. 151. 152. 153. 154. 155. 156. 157. 158. 159. 160. 161. 162. 163. 164. 165. 166. 167. 168. 169. 170. 171. 172. 173. 174. 175. 176. 177. 178. 179. 180. 181. 182. 183. 184. 185. 186. 187. 188. 189. 190. 191. 192. 193. 194. 195. 196. 197. 198. 199. 200. 201. 202. 203. 204. 205. 206. 207. 208. 209. 210. 211. 212. 213. 214. 215. 216. 217. 218. 219. 220. 221. 222. 223. 224. 225. 226. 227. 228. 229. 230. 231. 232. 233. 234. 235. 236. 237. 238. 239. 240. 241. 242. 243. 244. 245. 246. 247. 248. 249. 250. 251. 252. 253. 254. 255. 256. 257. 258. 259. 260. 261. 262. 263. 264. 265. 266. 267. 268. 269. 270. 271. 272. 273. 274. 275. 276. 277. 278. 279. 280. 281. 282. 283. 284. 285. 286. 287. 288. 289. 290. 291. 292. 293. 294. 295. 296. 297. 298. 299. 300. 301. 302. 303. 304. 305. 306. 307. 308. 309. 310. 311. 312. 313. 314. 315. 316. 317. 318. 319. 320. 321. 322. 323. 324. 325. 326. 327. 328. 329. 330. 331. 332. 333. 334. 335. 336. 337. 338. 339. 340. 341. 342. 343. 344. 345. 346. 347. 348. 349. 350. 351. 352. 353. 354. 355. 356. 357. 358. 359. 360. 361. 362. 363. 364. 365. 366. 367. 368. 369. 370. 371. 372. 373. 374. 375. 376. 377. 378. 379. 380. 381. 382. 383. 384. 385. 386. 387. 388. 389. 390. 391. 392. 393. 394. 395. 396. 397. 398. 399. 400. 401. 402. 403. 404. 405. 406. 407. 408. 409. 410. 411. 412. 413. 414. 415. 416. 417. 418. 419. 420. 421. 422. 423. 424. 425. 426. 427. 428. 429. 430. 431. 432. 433. 434. 435. 436. 437. 438. 439. 440. 441. 442. 443. 444. 445. 446. 447. 448. 449. 450. 451. 452. 453. 454. 455. 456. 457. 458. 459. 460. 461. 462. 463. 464. 465. 466. 467. 468. 469. 470. 471. 472. 473. 474. 475. 476. 477. 478. 479. 480. 481. 482. 483. 484. 485. 486. 487. 488. 489. 490. 491. 492. 493. 494. 495. 496. 497. 498. 499. 500. 501. 502. 503. 504. 505. 506. 507. 508. 509. 510. 511. 512. 513. 514. 515. 516. 517. 518. 519. 520. 521. 522. 523. 524. 525. 526. 527. 528. 529. 530. 531. 532. 533. 534. 535. 536. 537. 538. 539. 540. 541. 542. 543. 544. 545. 546. 547. 548. 549. 550. 551. 552. 553. 554. 555. 556. 557. 558. 559. 560. 561. 562. 563. 564. 565. 566. 567. 568. 569. 570. 571. 572. 573. 574. 575. 576. 577. 578. 579. 580. 581. 582. 583. 584. 585. 586. 587. 588. 589. 590. 591. 592. 593. 594. 595. 596. 597. 598. 599. 600. 601. 602. 603. 604. 605. 606. 607. 608. 609. 610. 611. 612. 613. 614. 615. 616. 617. 618. 619. 620. 621. 622. 623. 624. 625. 626. 627. 628. 629. 630. 631. 632. 633. 634. 635. 636. 637. 638. 639. 640. 641. 642. 643. 644. 645. 646. 647. 648. 649. 650. 651. 652. 653. 654. 655. 656. 657. 658. 659. 660. 661. 662. 663. 664. 665. 666. 667. 668. 669. 670. 671. 672. 673. 674. 675. 676. 677. 678. 679. 680. 681. 682. 683. 684. 685. 686. 687. 688. 689. 690. 691. 692. 693. 694. 695. 696. 697. 698. 699. 700. 701. 702. 703. 704. 705. 706. 707. 708. 709. 710. 711. 712. 713. 714. 715. 716. 717. 718. 719. 720. 721. 722. 723. 724. 725. 726. 727. 728. 729. 730. 731. 732. 733. 734. 735. 736. 737. 738. 739. 740. 741. 742. 743. 744. 745. 746. 747. 748. 749. 750. 751. 752. 753. 754. 755. 756. 757. 758. 759. 760. 761. 762. 763. 764. 765. 766. 767. 768. 769. 770. 771. 772. 773. 774. 775. 776. 777. 778. 779. 780. 781. 782. 783. 784. 785. 786. 787. 788. 789. 790. 791. 792. 793. 794. 795. 796. 797. 798. 799. 800. 801. 802. 803. 804. 805. 806. 807. 808. 809. 810. 811. 812. 813. 814. 815. 816. 817. 818. 819. 820. 821. 822. 823. 824. 825. 826. 827. 828. 829. 830. 831. 832. 833. 834. 835. 836. 837. 838. 839. 840. 841. 842. 843. 844. 845. 846. 847. 848. 849. 850. 851. 852. 853. 854. 855. 856. 857. 858. 859. 860. 861. 862. 863. 864. 865. 866. 867. 868. 869. 870. 871. 872. 873. 874. 875. 876. 877. 878. 879. 880. 881. 882. 883. 884. 885. 886. 887. 888. 889. 890. 891. 892. 893. 894. 895. 896. 897. 898. 899. 900. 901. 902. 903. 904. 905. 906. 907. 908. 909. 910. 911. 912. 913. 914. 915. 916. 917. 918. 919. 920. 921. 922. 923. 924. 925. 926. 927. 928. 929. 930. 931. 932. 933. 934. 935. 936. 937. 938. 939. 940. 941. 942. 943. 944. 945. 946. 947. 948. 949. 950. 951. 952. 953. 954. 955. 956. 957. 958. 959. 960. 961. 962. 963. 964. 965. 966. 967. 968. 969. 970. 971. 972. 973. 974. 975. 976. 977. 978. 979. 980. 981. 982. 983. 984. 985. 986. 987. 988. 989. 990. 991. 992. 993. 994. 995. 996. 997. 998. 999. 1000.

քերէն. «... Եւ շատ եւս մեկնութիւնս գրոց թարգմանէին: Եւ այնպէս զամենայն ժամանակս կենաց իւրեանց յընթերցուածս գրոց ծախէին Հարքև... օրինակ բարեաց ուսումնասէր առնրերակայից լինէին¹ » յայտնի է որ խօսքը թէ՛ Սահակի և թէ՛ Մեսրոպի վրայ է. որովհետեւ հարք՝ միայն երկուքն էին, մնացեալները ամէնքն ալ աշակերտ առնթերակայ, և կարելի չէր որ կորին իր երէց ընկերներն՝ օրինակի համար Յովհանն ու Յովսէփը իրենց հայր կոչէր:

Կորիւնի տարտամութիւնը կը հաստատուի խորենացոյն յստակ վկայութեամբ. «... Զոր առեալ մեծին Սահակայ և Մեսրոպայ, դարձեալ թարգմանեցին զմի անգամ թարգմանեալն, փութանակի, հակեղծ նորօք վերստին յօրինեալ նորոգմամբ² » ուր հարքև—ի լուծումը կը գտնենք Մեսրոպի մէջ, և առնրերակայինը՝ հակեղծ նորօքի մէջ, այսինքն Բիւզանդիոնէն եկող և այլ աշակերտներ:

Այսպէս, Մեսրոպ ինչպէս հիմնադիր և գլուխ նուիրական գործին, նոյնպէս հոն է ամբողջ ընթացքին և վերջին կարեւոր աշխատութեան: Եւ հայ ազգի լուսաւորութեան այդ արեգակը իր ճառագայթներով լուսաւորեց, ինչպէս կ'ըսէ կորիւն, « զամենայն կողմանս Հայոց, Վրաց և Աղուանից, զամենայն ժամանակս կենաց իւրոց... զամենայն ոգի քրիստոսազգեստ և հոգեղէն վառեաց... զամենայն միանգամայն յաստուածպաշտութեան պայման անդ փոխեաց... բազում և անհամար գունդս վանականաց... հաստատէր... »: Որուն հետեւանքով օր ըստ օրէ կը պայծառանար հայ աշխարհը գիտութեամբ, կրթութեամբ, կրօնքով. « Անդ էր այնուհետեւ չարբենալ զինով, այլ առաւելու հոգով... Անդ կրթութիւն... անդ քա-

ջալերութիւն յորդորական վարդապետութեան... անդ եռալ հոգով աստուածապաշտ ծառայութեամբ », և Մեսրոպ որ ի հարկին երբ կանչուէր « իրաց ինչ օգտակարաց եկեղեցեաց կողմանցն այնոցիկ՝ հասանել յօգնականութիւն. և նորա առանց իրիք զբաղելոյ՝ հանդերձ գործակցօր իջեալ ի թիկունս... զվտակս վարդապետութեան ի սիրտս լսողացն ծաւալեցուցանէր: Եւ զայս առնէր զամենայն ժամանակս իւր, վասն անձին և վասն աշխարհի »:

Եւ յետ Ս. Սահակի մահուան, ապրելով հանդերձ խստակրօն ձգնաւորի մը պէս միայնաւոր « սակայն... զվերակացութիւնն սրբոյ եկեղեցոյ, շնորհօքն Աստուծոյ առանց պակասութեան տանէր »: Եւ օրհասին մօտեանալուն, երբ մեծն Մեսրոպ երկնակարկառ բազուկներով իր աշխարհին համար կ'աղօթէր՝ հոգեգմայլ տեսիլ մը կ'երեւէր, նախագուշակ վերահաս երանութեան և փառքին, որուն վերանալէն առաջ « գսէր և զմիարանութիւն աւանդեալ, զմերձաւորս և զհեռաւորս օրհնութեամբ պսակէր³ »:

Մինչ զինքը պաշտող երկիւղած ձեռքեր խոնկով ու մոմով կը տանին հանգչեցնելու իր սուրբ մարմինը Օշականի մէջ մարտիրոսներու կողքին, անդին Հայ աշխարհը խոր սուգի մէջ կը մտնէ, դարերը կը սահին, և Մեսրոպ կ'աստուածանայ հայ մտքին և սրտին մէջ՝ և Հայ Եկեղեցին, սրբազան աւանդապահ ազգային նուիրականութեանց, կ'երգէ ու պիտի երգէ դարերով անոր անմահ անունը՝ անմահ և անմահացնող իր գործով. « Նմանեալ Մովսէսի, տէր վարդապետ, բերելով զգիր օրինաց ի Հայաստան աշխարհս, որով լուսաւորեցան ազգ որդւոց թորգոմայ⁴ »:

(Շարունակելի) Զ. Երև. Փետրեան

1. Աճ, 34.
2. Պատմ. Հայոց Գ. կա. (547): Հմտ: Սուտ—կորիւն (Սովետ. ԺՍ. էջ 17) ուր խորենացոյն համեմատ Մեսրոպն ալ կը գնէ:

3. Կորիւն Պատմ. վարուց են. 35-45.
4. Շարական թարգմանչաց (Մանկունք). որուն յօրինողը կը համարուի մեծն Վարդան վրդ.:

ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐՈՒ ՎԱՆՔԻՆ ԱՍՂՆԵԳՈՐԾ ԿՏՈՐՆԵՐՆ ԵՒ ԺԱՆԵԱԿՆԵՐԸ

Անոնք եղած են Կ. Պոլսի Հայ Գեղարուեստական Միութենէն, որուն կեանքը կարճ եղաւ, թէեւ իր գործունէութիւնը կը խոստանար բեղուն ըլլալ:

Իր կանոնագրութիւնը կանխահոգակ կերպով կը տրամադրէր թէ՛ ընկերութեան լուծման պարագային՝ իր ինչքերը պէտք է տրուէին ազգային կրթական հաստատութեան մը:

Վենետիոյ Միթարեանց մենաստանէր — որու անունն անբաժան է այն վարժարաններէն որոնք դարէ մը ի վեր մեծամեծ ծառայութիւններ մատուցած են Հայ ազգին և դեռ կը շարունակեն — որ ինձի ընտրելագոյն միջավայրը թուեցաւ, մասնաւորապէս անոր համար որ այդ առարկաները հայերէն զատ օտարներուն ալ մատչելի պիտի ըլլային:

Ասդնեգործ աշխատութիւնները (Broderies) ի բնէ անձուկ կերպով կը միանան կապերտներուն, և այս վերջիններուն հետ ունեցած մերձաւորութեան ձեռքով էր որ կարելի կ'ըլլայ սահմանել Ս. Ղազարու ասդնեգործ աշխատութեանց ծագումն և մտաւոր թուականը:


Առաջին ասդնեգործուածը մետաքսէ ուղղանկիւն՝ 1, 7 × 0, 66 ծաւալով ամբողջական կտոր մ'է և գնուած է Կ. Պոլսոյ մէջ Հայ Գեղարուեստական Միութեան կողմէն:

Թէեւ անոր ներկայացուցած ուղղահայեաց երիզներով ընդհանուր յօրինուածքին չենք հանդիպիր հայկական գորգերուն վրայ, կմախակերպ լուտասը — յատկանշական զարդածեւ այդ գորգերուն դասական շրջանին՝ այսինքն ժե— ժՁ դարերուն — հոն կարեւոր տեղ մը կը բռնէ, (պատկ. 1) ինչպէս որ իր եզերագարդի

նեղութիւնը կը յիշեցնէ հայկական գորգերը: Այն երիզներուն վրայ որ լայն են, լուտասն աւելի աշխատուած է քան նեղ երիզներուն վրայ և կը յաջորդեն փոփոխակի՝ դէմ ընդդէմ չորքոտանիներ զետեղուած երկու կողմերը իր ցողունին, որ այդ ձևով կարծես տնակ մը կը կազմէ:

Բաց ի այս կրկնակ տարրերէն՝ մին բուսական և միւսը կենդանական՝ հայ գորգերու ոճին մէջ, եզերագարդին վրայ կը գտնենք տիպարական Տ մը թէ՛ այս և թէ՛ հայկական շատ մը գորգերու վրայ:

Ատիկա պէտք է որ ներկայացնէ չի-



թ. 1.